## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 մայիսի 2024 թվականի թիվ 233-Ա

### «ՋԻՋԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2024 թվականի մայիսի 21-ի նիստում, քննարկելով «Ջիջի» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին հարցը,

### Պ Ա Ր Զ Ե Ց

Ֆիզիկական անձ Արտակ Գաբոյանը (այսուհետ նաև՝ **Ա. Գաբոյան**) 2024 թվականի մայիսի 7-ին հաղորդում (այսուհետ նաև՝ **Հաղորդում**) է ներկայացրել՝ հայտնելով, որ Ընկերությունն անկանխիկ գործարքների դեպքում առերևույթ խարդախության է դիմում՝ ուղևորների քարտային հաշվից գանձելով ծրագրում ցուցադրվածից ավել գումար:

Ա. Գաբոյանը նշել է, որ Ընկերությունը զգուշացրել է. քարտով վճարման գումարը 2% ավել է լինելու կանխիկ վճարումից, բայց դա պարտավոր են ցույց տալ ծառայության մատուցման վերջնահաշվարկում:

Ըստ Ա. Գաբոյանի՝ եթե նախօրոք նշվում է երթի վերջնակետը, և ծրագիրը ցույց է տալիս, թե ինչ կարժենա երթը, երթի ավարտին այդ թիվը հիմնականում աճում է, ու դա նույնպես չի արտացոլվում ծրագրի ապրանքագրում:

Ա. Գաբոյանը կից ներկայացրել է մի փաստաթուղթ, ըստ որի՝ երթի գինը կազմել է 1400 դրամ (ինչը ցույց է տրվում ծրագրի «պատվերի մանրամասներ» էջում), բայց ապրանքագրում այլ թվեր են պատկերված: Երթի գումար նշված է 800 դրամ, գործարքի տոկոսագումար՝ 28 դրամ, և թեյավճար՝ 300 դրամ այն դեպքում, երբ Ա. Գաբոյանի գումարային հաշվից պահվել է 1428 դրամ երթի համար, և 300 դրամ՝ թեյավճար:

Միաժամանակ, Հանձնաժողովի էլեկտրոնային փոստի հասցեին ֆիզիկական անձ Ալեքսանդր Լապշինի (այսուհետ նաև՝ **Ա. Լապշին**) անունից ստացվել է նամակ, որտեղ, ի թիվս այլնի, առկա է Ա. Լապշինի «Facebook» սոցիալական ցանցի էջի հղումը: Տվյալ էջում վերջինս նշել է, որ Ընկերության կողմից իրականացվում են խարդախություններ և գումարների յուրացում: Մասնավորապես, նշվել է, որ տաքսի պատվիրելիս նշվում է մի գումար, իսկ կցված բանկային քարտից գանձվում է մեկ այլ գումար: Բացի այդ, GG հավելվածում հայտնվել են հավելավճարներ, որոնք հաճախ, ըստ Ա. Լապշինի, կազմում են ավելին, քան ճանապարհորդության ողջ արժեքն է:

Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2024 թվականի մայիսի 15-ի թիվ 280-Ա հրամանի հիման վրա «https://team.gg/» կայքում (այսուհետ նաև՝ **Կայք**) իրականացվել է արտաքին դիտում, որի արդյունքում կազմվել է «Արտաքին դիտման արդյունքների վերաբերյալ» թիվ 280 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 280 արձանագրություն**):

Թիվ 280 արձանագրության համաձայն՝ Կայքի «Գաղտնիություն» կամ «ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բաժնի «Տերմիններ և սահմանումներ»-ում, ի թիվս այլնի, նշված է հետևյալը.

« - Ընկերություն՝ «Ջիջի» ՓԲԸ:

- Կրեդիտ քարտի տեղեկություններ՝ Վճարման այս տվյալները պատկանում են Ձեզ, և ծառայությունից օգտվելով՝ Դուք թույլատրում եք Ընկերությանն օգտագործել այդ տվյալները՝ Ձեզ մատուցած ծառայությունների դիմաց գանձում կատարելու համար:»:

Կայքի «Դրույթներ» կամ «Պայմաններ և դրույթներ» բաժնում, ի թիվս այլնի, նշված է հետևյալը.

«Հետևյալ «Պայմաններ և դրույթներ»-ը («Պայմաններ») պայմանագիր է Ձեր և «gg» ՓԲԸ-ի («Ընկերություն») միջև, որը սահմանում է մեր կողմից տրամադրվող և Ձեր կողմից օգտագործվող տվյալների, տեղեկատվության, ծրագրային ապահովման, գրաֆիկայի, նկարների և այլ տեղեկատվության («Թեմաներ») օգտագործման մասին՝ ներառյալ մեր կայքերի կամ այլ ներբեռնելի գործիքների («Հարթակ») կողմից տրամադրվող ծառայությունների օգտագործման կարգը: «Մեզ», «մենք» կամ «մեր» դրույթները վերաբերում են հավելվածի՝ «gg» ՓԲԸ-ի սեփականատիրոջը: Եթե ցանկանում եք ստորագրել Պայմանները որևէ ընկերության կամ կազմակերպության անունից, Դուք դուք հավաստում եւ երաշխավորում եք, որ ունեք անհրաժեշտ լիազորություն՝ ստորագրելու Պայմանները այդ ընկերության կամ կազմակերպության անունից:

1. Հիմնական դրույթներ

1.1 gg հավելվածն օնլայն հարթակ է, որը հնարավորություն է տալիս օգտագործել նրանում ներառված ծառայությունները:

1.2 Հավելվածը կառավարվում է ընկերության կողմից:

(...)

1.6 Հավելվածն օգտագործելով՝ օգտատերն ընդունում է Պայմանները՝ դրանով հաստատելով իր Համաձայնությունը Պայմաններում նշված բոլոր դրույթներին, ինչպես նաև պարտավորվում է օգտագործել Պայմանները բացառապես սահմանված կարգով:

1.7 Եթե օգտատերը չի ընդունում Պայմանները, նա չի կարող օգտագործել հավելվածը, հայտեր լրացնել կամ ցանկացած այլ գործողություն կատարել հավելվածի օգտագործման հետ կապված:

2. Դրույթներ և սահմանումներ

2.2 Ընկերություն. սույն Պայմանները վերահսկող ղեկավար մարմինը՝ «gg» փակ բաժնետիրական ընկերությունը:

3. Ինչպես օգտվել Հավելվածից

7. Պատասխանատվություն

7.1 Ընկերությունը տրամադրում է հավելվածի ծառայություններն «Ինչպես որ կա» սկզբունքով: Այս առումով Օգտատերը երաշխավորված չէ, որ.

7.1.1 Հավելվածը կհամապատասխանի Օգտատիրոջ պահանջներին:

Ծառայությունները կմատուցվեն մշտապես, արագ, ապահով և անսխալ:

7.1.2 Արդյունքը, որը կարելի է ստանալ Հավելվածի օգտագործումից, կլինի ճշգրիտ և հուսալի:

7.1.3 Ցանկացած պրոդուկտի, ծառայության, Օգտատիրոջ Նյութերի և Հավելվածի օգտագործման արդյունքում ստացված տեղեկատվության որակը կհամապատասխանի Օգտատիրոջ ակնկալիքներին:

7.1.4 Ծրագրային բոլոր անճշտությունները կշտկվեն:

8. Պայմանների փոփոխություն և չեղարկում

8.1 Պայմանները (ներառյալ ցանկացած հոդված, կետ, պարբերություն կամ դրա ցանկացած մաս) կարող են փոփոխվել Ընկերության կողմից առանց որևէ հատուկ հաղորդման:

(…)

8.3 Սույն Պայմանները և Դրույթները կարող են դադարեցվել կողմերից ցանկացածի հայտեցողությամբ: Ընկերությունն իրեն իրավունք է վերապահում դադարեցնել Պայմանները ցանկացած պահի՝ առանց պատճառները բացատրելու և Օգտատիրոջը տեղեկացնելու, ինչպես նաև այդ պահին արգելափակել մուտքը Հավելված:

8.4 Պայմանների դադարեցման դեպքում պայմանագրի ընթացքում ձեռք բերված իրավունքները պահպանվում են:

8.5 Ընկերությունը պատասխանատվություն չի կրում պայմանագրի դրույթներն իրագործելու անհնարինության համար՝ կողմերի ողջամիտ վերահսկողությունից դուրս հանգամանքների կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով՝ ներառյալ համացանցի անսարքությունները, հրդեհները, ռազմական գործողությունները, ջրհեղեղները և այլ բնական աղետները:

8.6 Ընկերությունը չի պարտավորվում տեղեկացնել Օգտատիրոջը Պայմանների 8.5 կետում նշված հանգամանքների մասին:»:

Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2024 թվականի մայիսի 15-ի թիվ 281-Ա հրամանի հիման վրա Ընկերության «gg» հավելվածում անկանխիկ եղանակով պատվերի միջոցով 2024 թվականի մայիսի 17-ին իրականացվել է հսկիչ գնում,

որի արդյունքում կազմվել է «Հսկիչ գնման արդյունքների վերաբերյալ» թիվ 281 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 281 արձանագրություն**):

Թիվ 281 արձանագրության համաձայն՝ «gg» հավելվածի միջոցով իրականացվեց պատվեր՝ ք. Երևան, Տիգրան Մեծի պողոտա 4 հասցեից ք. Երևան, Մամիկոնյանց 44/2 հասցե երթուղով: Երթի իրականացման սկզբում դրա արժեքը «gg» հավելվածում նշվել է 1200 ՀՀ դրամ, պատվերի ավարտի ժամանակ նույնպես երթի արժեքը «gg» հավելվածում նշվել է 1200 ՀՀ դրամ՝ պատվերի մանրամասներում: Երթի ապրանքագրի համաձայն՝ երթի ընդամենը արժեքը կազմել է 1224 ՀՀ դրամ: Երթն իրականացվել է պետհամարանիշով սպիտակ «Toyota» մակնիշի ավտոմեքենայով, որի վարորդի անունը «gg» հավելվածի տվյալների համաձայն՝ «Hayrapet» է:

Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2024 թվականի մայիսի 15-ի թիվ 282-Ա հրամանի հիման վրա Ընկերության «gg» հավելվածում անկանխիկ եղանակով պատվերի միջոցով 2024 թվականի մայիսի 17-ին իրականացվել է հսկիչ գնում, որի արդյունքում կազմվել է «Հսկիչ գնման արդյունքների վերաբերյալ» թիվ 282 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 282 արձանագրություն**):

Թիվ 282 արձանագրության համաձայն՝ «gg» հավելվածի միջոցով իրականացվեց պատվեր՝ ք. Երևան, Տիգրան Մեծի պողոտա 4 հասցեից դեպի ք. Երևան, Մամիկոնյանց 44/2 հասցե երթուղով: Երթի իրականացման սկզբում դրա արժեքը «gg» հավելվածում նշվել է 1200 ՀՀ դրամ, իսկ պատվերի ավարտի ժամանակ «gg» հավելվածում երթի արժեքը նշվել է 1400 ՀՀ դրամ՝ պատվերի մանրամասներում:

Երթի ապրանքագրի համաձայն՝ երթի ընդամենն արժեքը կազմել է 1428 ՀՀ դրամ: Երթն իրականացվել է պետհամարանիշով, սև «Toyota» մակնիշի ավտոմեքենայով, որի վարորդի անունը «gg» հավելվածի տվյալների համաձայն՝ «Davit» է:

Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2024 թվականի մայիսի 15-ի թիվ 283-Ա հրամանի հիման վրա Ընկերությանը պատկանող «gg» հավելվածում անկանխիկ եղանակով պատվերի միջոցով իրականացվել է հսկիչ գնում, որի արդյունքում կազմվել է «Հսկիչ գնման արդյունքների վերաբերյալ» թիվ 283 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 283 արձանագրություն**):

Թիվ 283 արձանագրության համաձայն՝ հսկիչ գնման ընթացքում «gg» հավելվածի միջոցով իրականացվեց պատվեր՝ ք. Երևան, Նալբանդյան 28 հասցեից դեպի ք. Երևան, Մամիկոնյանց 44/2 հասցե երթուղով: Երթի իրականացման սկզբում դրա արժեքը «gg» հավելվածում նշվել է 1000 ՀՀ դրամ: Երթի ապրանքագրի համաձայն՝ երթի ընդամենն արժեքը կազմել է 1020 ՀՀ դրամ: Երթն իրականացվել է պետհամարանիշով, մոխրագույն «Nissan» մակնիշի մեքենայով, որի վարորդի անունը «gg» հավելվածի տվյալների համաձայն՝ «Derenik» է:

Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2024 թվականի մայիսի 17-ի թիվ 291-Ա հրամանի հիման վրա 2024 թվականի մայիսի 20-ին Ընկերությանը պատկանող «gg» հավելվածում անկանխիկ եղանակով պատվերի միջոցով իրականացվել է հսկիչ գնում, որի արդյունքում կազմվել է «Հսկիչ գնման արդյունքների վերաբերյալ» թիվ 291 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 291 արձանագրություն**):

Թիվ 291 արձանագրության համաձայն՝ «gg» հավելվածի միջոցով իրականացվեց պատվեր՝ ք. Երևան, Տիգրան Մեծի պողոտա 4 հասցեից դեպի ք. Երևան, Մամիկոնյանց 44/2 հասցե երթուղով: Երթի իրականացման սկզբում դրա արժեքը «gg» հավելվածում նշվել է 1200 ՀՀ դրամ և նույն արժեքը «gg» հավելվածում նշվել է նաև պատվերի ավարտի ժամանակ՝ պատվերի մանրամասներում: Երթն իրականացվել է պետհամարանիշով սպիտակ «toyota» մակնիշի մեքենայով: Ըստ «gg» հավելվածի տվյալների՝ վարորդի անունը «Pushkin» է: Երթի ապրանքագրի համաձայն՝ երթի ընդամենն արժեքը կազմել է 1224 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2024 թվականի մայիսի 17-ի թիվ 292-Ա հրամանի հիման վրա 2024 թվականի մայիսի 20-ին Ընկերությանը պատկանող «gg» հավելվածում անկանխիկ եղանակով պատվերի միջոցով իրականացվել է հսկիչ գնում, որի արդյունքում կազմվել է «Հսկիչ գնման արդյունքների վերաբերյալ» թիվ 292 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 292 արձանագրություն**):

Թիվ 292 արձանագրության համաձայն՝ «gg» հավելվածի միջոցով իրականացվեց պատվեր՝ ք. Երևան, Տիգրան Մեծի պողոտա 4 հասցեից դեպի ք. Երևան, Մամիկոնյանց 44/2 հասցե երթուղով: Երթի իրականացման սկզբում դրա արժեքը «gg» հավելվածում նշվել է 1200 ՀՀ դրամ և նույն արժեքը «gg» հավելվածում նշվել է նաև պատվերի ավարտի ժամանակ՝ պատվերի մանրամասներում: Երթն իրականացվել է պետհամարանիշով մոխրագույն «BYD» մակնիշի մեքենայով: Ըստ «gg» հավելվածի տվյալների՝ վարորդի անունը «Hovhannes» է: Երթի ապրանքագրի համաձայն՝ երթի ընդամենը արժեքը կազմել է 1224 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2024 թվականի մայիսի 17-ի թիվ 293-Ա հրամանի հիման վրա 2024 թվականի մայիսի 20-ին Ընկերությանը պատկանող «gg» հավելվածում անկանխիկ եղանակով պատվերի միջոցով իրականացվել է հսկիչ գնում, որի արդյունքում կազմվել է «Հսկիչ գնման արդյունքների վերաբերյալ» թիվ 293 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 293 արձանագրություն**):

Թիվ 293 արձանագրության համաձայն՝ «gg» հավելվածի միջոցով իրականացվեց պատվեր՝ ք. Երևան, Տիգրան Մեծի պողոտա 4 հասցեից դեպի ք. Երևան, Մամիկոնյանց 44/2 հասցե երթուղով: Երթի իրականացման սկզբում դրա արժեքը «gg» հավելվածում նշվել է 1000 ՀՀ դրամ և նույն արժեքը «gg» հավելվածում նշվել է նաև պատվերի ավարտի ժամանակ՝ պատվերի մանրամասներում: Երթն իրականացվել է պետհամարանիշով սպիտակ «KIA» մակնիշի մեքենայով: Ըստ «gg» հավելվածի տվյալների՝ վարորդի անունը «Hayk» է: Երթի ապրանքագրի համաձայն՝ երթի ընդամենն արժեքը կազմել է 1020 ՀՀ դրամ:

Հսկիչ գնման տեսաձայնագրություններից նաև երևում է, որ պատվերի անմիջապես ավարտին չի ցուցադրվում դրա վերջնական գինը:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար

շրջանառության սովորույթներին, խախտում է տնտեսավարող սուբյեկտների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է:

Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն են սույն օրենքի 17-24-րդ հոդվածներում նախատեսված դեպքերը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողությունները:

Վերոնշյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է գործողությունը անբարեխիղճ դիտարկելու երկու եղանակ. մի դեպքում անբարեխիղճ մրցակցության դեպքերն են Օրենքի 16-24-րդ հոդվածներով սահմանված առանձին դրսևորումները, մյուս դեպքում՝ Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշները պարունակող գործողությունները, այն է՝ տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը.

1. հակասում է Օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին,

2. խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս և սպառողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում հասարակության մոլորեցումը, այդ թվում՝

1) ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց գովազդմանը, տարածմանը կամ իրացմանը նպաստող միջոցառումների, ապրանքի աշխարհագրական ծագման կամ սույն օրենքի 20-րդ հոդվածում թվարկված բնութագրերի կամ պայմանների վերաբերյալ.

2) ապրանքների որակն անհիմն չափազանցնելը կամ որակի, քանակի կամ այլ բնութագրերի կամ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը կամ տեղեկատվությունն այն ձևով ներկայացնելը, որը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման).

3) գովազդի մեջ (գովազդելու ընթացքում) կամ իրացման ընթացքում թերի կամ կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը կամ այնպիսի տվյալների (տեղեկությունների) բացակայությունը կամ տվյալների (տեղեկությունների) այն ձևով նշումը, որն սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու իրացվող կամ գովազդվող ապրանքի կամ տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ.

4) օրենքին հակասող, այդ թվում՝ անբարեխիղճ կամ հակաօրինական կամ հավաստիության կամ պատշաճության խախտմամբ իրականացվող գովազդները, որոնք կարող են կանխել, սահմանափակել կամ արգելել տնտեսական մրցակցությունը կամ վնասել սպառողների շահերը:

Վերոնշյալից հետևում է, որ օրենսդիրը հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության օբյեկտիվ կողմի սպառիչ ցանկ չի սահմանել, այլ մասնավորեցրել է դրանցից մի քանիսը, որոնք արտահայտվում են.

1) ապրանքի բնութագրերի կամ իրացման պայմանների վերաբերյալ թյուր տպավորության՝ ապակողմնորոշելու հնարավորության ստեղծմամբ, այդ թվում՝ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելու եղանակով.

2) սպառողին գովազդվող կամ իրացվող ապրանքի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու հնարավորություն չտալով, այդ թվում՝ թերի, կեղծ կամ ոչ լիարժեք տվյալներ նշելու եղանակով.

3) տնտեսական մրցակցությունը կանխող, սահմանափակող կամ արգելող կամ սպառողների շահերը վնասող օրենքին հակասող գովազդով.

4) ցանկացած այլ դրսևորմամբ, որը ստեղծում է տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց բնութագրերի կամ այլ պայմանների վերաբերյալ մոլորեցնելու հնարավորություն:

Ընդ որում, միևնույն վարքագիծը միաժամանակ կարող է համապատասխանել հասարակության մոլորեցման մեկից ավելի դրսևորումներին: Այսպես, օրինակ՝ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը կարող է ոչ միայն ամբողջական պատկերացում կազմելու հնարավորություն չտալ, այլ նաև ստեղծել թյուր տպավորության՝ ապակողմնորոշելու հնարավորություն:

Նման պայմաններում Ընկերության կողմից «gg» հավելվածի միջոցով անկանխիկ եղանակով պատվեր գրանցելիս ներկայացված արժեքը երթի ավարտին ավելացնելը, ինչպես նաև պատվերի ավարտի ժամանակ կոնկրետ գումար ներկայացնելը, սակայն դրանից ավել գումար գանձելն առերևույթ կարող է պարունակել հասարակության մոլորեցման դրսևորումներով անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ:

Օրենքի 92-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցության համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը:

Օրենքի 93-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափը կազմում է իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի նկատմամբ սույն հոդվածում նախատեսված տոկոսը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում Ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման հատկանիշների առկայությունը պարզելու նպատակով հարուցել վարույթ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 79-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 83-րդ հոդվածի 1-ին մասով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. «Ջիջի» փակ բաժնետիրական ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ հարուցել վարույթ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՆԱԽԱԳԱՀԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈԽԱՐԻՆՈՂ** **Տ. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

2024 թ. մայիսի 21
Երևան